ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 54 39 91, Ֆաքս 54 39 97, E-mail: info@anra.am

No 11-մ-24 15.06. 2018թ.

Ձեր No 335-ի 4 12.06. 2018թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ տիկին Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեում (այսուհետ՝ կոմիտե) տեղեկատվության ազատության համար պատասխանատու է նշանակված Գագիկ Մանոյանը (կոմիտեի աշխատակազմի ղեկավար), ում տվյալները նշված են կոմիտեի կայքում՝ http://www.anra.am/:

Կից ներկայացվում է համապատասխան հրամանի պատճենը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Աշոտ Մարտիրոսյան

Միջուկ.տեղեկատվության բաժին -564014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք.Երևան «21» հուլիսի 2017թ.

ՀՐԱՄԱՆ №186-Ա

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» №1204-Ն որոշման

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու նշանակել կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Գ.Մանոյանին, նրան հանձնարարելով ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի №1204-Ն որոշման Հավելված 1-ի 1-ից 6-րդ և Հավելված 2-ի 7-րդ և 8-րդ կետերի կատարումը:

2. Կոմիտեի աշխատակազմի միջուկային տեղեկատվության և միջազգային համագործակցության բաժնի պետ Ա.Մելքումյանին՝ ապահովել կոմիտեի պաշտոնական կայքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի № 1204-Ն որոշման հավելված 1-ի 6-րդ և հավելված 2-ի 14-րդ կետերի պահանջներին:

3. Ուժը կորցրած ճանաչել կոմիտեի նախագահի 2016 թվականի մայիսի 3-ի № 109-Ա հրամանը:

ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ